ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2026թ. № 1216

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՋՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-068-0033-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,162 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի հունիսի 30-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 1572), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06022S3NLMRA) և Նիկալ Ռազմիկի Օթարյանի (ծնված՝ 06.12.1956թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրում գտնվող 06-068-0033-0005 կադաստրային ծածկագրով 0,162 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Արջհովիտ, 6-րդ փողոց, 4-րդ փակուղի, 4 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1817):

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2026 թվականի N 1217

ՆԱՐԻՆԵ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 84-րդ հոդվածներով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1.1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետով, հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 2 որոշումը և Նարինե Վարուժանի Եղիազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից Նարինե Վարուժանի Եղիազարյանին նշանակել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2031 թվականի հոկտեմբերի 19-ը:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 180 000 (հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքի և հանգստի ժամանակը և աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2026 թվականի N 1218

ՔՐԻՍՏԻՆԵ ԱՀԱՐՈՆԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 84-րդ հոդվածներով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1.1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետով, հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 3 որոշումը և Քրիստինե Ահարոնի Ավագյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից Քրիստինե Ահարոնի Ավագյանին նշանակել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2031 թվականի հոկտեմբերի 19-ը:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 210 000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքի և հանգստի ժամանակը և աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2026 թվականի N 1219

ԿԱՐԵՆ ՆՈՐԻԿԻ ԱՓԻՑԱՐՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԾՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, 84-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Կարեն Նորիկի Ափիցարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կարեն Նորիկի Ափիցարյանին 2026 թվականի հոկտեմբերի 19-ից նշանակել Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի վարչական ղեկավար և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր մինչև համայնքի նոր ղեկավարի լիազորություններն ստանձնելուց հետո այդ պաշտոնում նոր նշանակում կատարվելը:
2. Վարչական ղեկավարի աշխատանքի վայրն է՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրը, հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Արևաշող 1-ին փողոց 105:
3. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 305 000 (երեք հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը՝ անկախիկ, փոխանցելով նրա կողմից ներկայացված հաշվի համարին:

Աշխատավարձը համարել փոփոխված՝ Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

4. Կարեն Նորիկի Ափիցարյանի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն՝ շաբաթական 5 աշխատանքային օր՝ օրական 8 ժամ ժամանակով, ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ և ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 4 աշխատանքային օր տևողությամբ:

Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է 9^{00}, ավարտը՝ 18^{00}: Արտաժամյա չի համարվում սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատանքը:

Հանգստի և սնվելու ընդմիջման սկիզբը սահմանվում է ժամը 13^{00}, ավարտը՝ ժամը 14^{00}:

5. Վարչական ղեկավարի լիազորությունները՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2026 թվականի N 1220

ՆՎԱՐԴ ԱՇՈՏԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 84-րդ հոդվածներով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1.1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետով, հիմք ընդունելով «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 16–ի թիվ 2 որոշումը և Նվարդ Աշոտի Սիրունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2026 թվականի հոկտեմբերի 20-ից մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից Նվարդ Աշոտի Սիրունյանին նշանակել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2031 թվականի հոկտեմբերի 20-ը:
2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքի և հանգստի ժամանակը և աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2026թ. № 1221

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՌՈՒԲԵՆ ԿԱՌԼԵՆԻ ԷՏԻԲԱՐՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 58-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 22.1-ին կետով, հաշվի առնելով, որ Ռուբեն Կառլենի Էտիբարյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0312-0017 կադաստրային ծածկագրով 0,068 հեկտար մակերեսով հողամասի վրա 1992 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, անասնաշենքի, ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 14-ի թիվ 52 որոշումը, 2026 թվականի փետրվարի 9-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 293), Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026RYKQAP, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ՆԱՐԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011QDSNMDY) Ռուբեն Կառլենի Էտիբարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1 Ռուբեն Կառլենի Էտիբարյանին (ծնված՝ 21.11.1963թ.), ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0312-0017 կադաստրային ծածկագրով 0,068 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 30,47 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը,

18,11 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը, 4,25 քառակուսի մետր մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ռուբեն Կառլենի Էտիբարյանին սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ քաղաք, Ք. Քըրքորյան փողոց, 10-րդ նրբանցք, 20 բնակելի տուն» հասցեն:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«19» հոկտեմբերի 2026թ. № 1222

ԳԵՎՈՐԳ ՍԵՐԺԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Գևորգ Սերժիկի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0498-0025 կադաստրային ծածկագրով 0,05510 հեկտար մակերեսով հողամասի վրա 2016 թվականին ինքնակամ կառուցված ավտոտնակի, պարսպի, 2019 թվականին ինքնակամ կառուցված ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22052015-06-0083 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026LTHDZ4, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ--ի կողմից տրամադրված եզրակացությունը և Գևորգ Սերժիկի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Սերժիկի Պողոսյանին (ծնված՝ 06.10.1987թ.), սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0498-0025 կադաստրային ծածկագրով 0,05510 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա

ինքնակամ կառուցված 34,30 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 2,30 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 55,90 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գևորգ Սերժիկի Պողոսյանի սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Գևորգ Սերժիկի Պողոսյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 187 451,285 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար: Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2026թ. № 1223

ԷԴՄՈՆ ԱԲՐԱՀԱՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի բնակիչ Էդմոն Աբրահամի Հովհաննիսյանը 2026 թվականի սեպտեմբերի 17-ին դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով ընդունել որոշում թիվ ՎԴ6/0150/05/20 վարչական գործով հրապարակված վճռով հաստատված Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի ոչ իրավաչափ անգործության արդյունքում Էլիչկա Մինասի Հովհաննիսյանին պատճառած 3 000 000 ՀՀ դրամ հատուցելու մասին և գումարը վճարել Էդմոն Հովհաննիսյանին՝ որպես վարչարարությամբ պատճառված վնաս:

Քննարկելով Էդմոն Աբրահամի Հովհաննիսյանի դիմումը՝ գտնում եմ, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ պարագայում Էդմոն Աբրահամի Հովհաննիսյանը չի ներկայացրել թիվ ՎԴ6/0150/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 25-ի վճռով ոչ իրավաչափ ճանաչված ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի (իրավահաջորդ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնք) ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակից Մաքսիմ Հովհաննիսյանի ընտանիքը հաշվառումից հանելու և ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների ցուցակում Մաքսիմ Հովհաննիսյանի

ընտանիքը չհաշվառելու գործողության հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում ստանալու իրավունքը ժառանգելու փաստը հաստատող ապացույց:

Ավելին, գտնում եմ, որ պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների ցուցակում չհաշվառելու գործողության հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում ստանալու իրավունքը հանդիսանում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ հաշվառվելու իրավունքը ծագում է անձի հետ անխզելիորեն կապ ունեցող որոշակի պայմանների առկայության դեպքում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու, տվյալ բնակավայրում հաշվառված ու մշտական բնակվելու (այդ թվում՝ երկրաշարժից հետո աղետի գոտու այլ բնակավայրերից տվյալ բնակավայր մշտական բնակության տեղափոխված), մինչև 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը բնակելի տուն ունենալու և այն երկրաշարժի հետևանքով քանդված կամ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն քանդման ենթակա լինելու պարագայում, հետևաբար այն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չի մտնում ժառանգության զանգվածի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 54-րդ և 55-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Էդմոն Աբրահամի Հովհաննիսյանի 2026 թվականի սեպտեմբերի 17-ի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդմոն Աբրահամի Հովհաննիսյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2026թ. № 1224

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության պատգամավորների Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի փետրվարի 29-ի թիվ 2 որոշման 17-րդ կետում Արտակ Արտավազդի Ստեփանյանի (ծնված 13.02.1976թ.) անունը սխալմամբ գրվել է «Սամվել», իսկ հայրանունը սխալմամբ գրվել է «Մարգարի», հիմք ընդունելով Արտակ Արտավազդի Ստեփանյանի անձնագրային տվյալները, Արտակ Արտավազդի Ստեփանյանի ներկայացուցիչ Արարատ Սամվելի Ստեփանյանի դիմումը, Սամվել Մարգարի Ստեփանյանի գրավոր հայտարարությունը և Սպիտակի քաղաքապետարանի կողմից 1996 թվականին Արտակ Արտավազդի Ստեփանյանին տրամադրված բնակելի տարածության թիվ 1 օրդերը և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2144846 վկայականը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության պատգամավորների Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի փետրվարի 29-ի թիվ 2 որոշման 17-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«17.Սպիտակ քաղաքի բնակիչ Արտակ Արտավազդի Ստեփանյանին ամրացված բնակարանը հաստատելու մասին:

/Ձեկ. Հ.Թ.Մինասյան/

Հաշվի առնելով ՀՀ բնակարանային օրենսգրքի 45-րդ հոդվածը, ՀՀ նախարարների խորհրդի և արհեստակցական կոնֆեդերացիայի համատեղ նիստի 25.07.89թ. թիվ 371 և 23.02.90թփ. թիվ 90 որոշումները, հիմք ընդունելով գործկոմին կից բնակարանային հանձնաժողովի եզրակացությունը,

Պատգամավորների Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն
ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հացամթերքների կոմբինատի «Փյունիկ» թաղամասի գերատեսչական շենքերի քաղխորհրդին հասանելիք 10 %-ի 6 բնակարաններից մեկը, թիվ 4 Ա. նախկինում ամրացված Արտակ Արտավազդի Ստեփանյանի ընտանիքին՝ 4 անձ, 3 սենյակ հաստատել և տալ բնակարանային օրդեր»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2026 թվականի N 1225

«ՍՊԻՏԱԿ ՏՐԱՆՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՏՐԱՆՍ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 21-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով հանձնաժողովի քարտուղար նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Թագուհի Շուշանյանին:

3. Աշխատակազմի ղեկավար Ազգանուշ Ֆրանգյանին՝ ապահովել սույն որոշման մասին մրցութային հանձնաժողովի անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1225 որոշման

ԿԱԶՄ
«ՍՊԻՏԱԿ ՏՐԱՆՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

հ/հ	անունը, ազգանունը	հաստատությունը (մարմինը)	պաշտոնը
1	Վահրամ Դանիելյան	ՀՀ Լոռու մարզպետարան	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ
2	Ալբերտ Դանիելյան	ՀՀ Լոռու մարզպետարան	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ
3	Զալիկո Համբարյան	Սպիտակ համայնքի ավագանի	Սպիտակ համայնքի ավագանու անդամ
4	Երեմ Գրիգորյան	Սպիտակ համայնքապետարան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ
5	Մելինե Հակոբջանյան	«Սպիտակի Ան. Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	«Սպիտակի Ան. Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի ուսուցչի օգնական

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2026 թ. № 1226

«ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154[1]-ին հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ հոդվածով, 282-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հաշվի առնելով, որ «ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2016 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 8 շինարարության թույլտվությամբ տրամադրված ժամկետում չի ավարտել կառուցապատումը, հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 13-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. «ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք շինարարության նախահաշվային արժեքի երեք տոկոսի չափով՝ 49,767 (քառասունինը հազար յոթ հարյուր վաթսունյոտ) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել «ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

3. «ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ Սպիտակ համայնքի ***900245161063*** գանձապետական հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը վարչական կարգով կարող է բողոքարկել որոշուն ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«20» հոկտեմբերի 2026թ. № 1227

06-006-0491-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,10500 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ քաղաքում գտնվող 06-006-0491-0005 կադաստրային ծածկագրով 0,08096 հեկտար մակերեսով հողամասի վրա 2019 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, աստիճանահարթակի և պարիսպների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01102018-06-0015 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026TPVYRB, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Էդգար Էդիկի ՈՒստյանի (ծնված՝10.11.1993թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0491-0005 կադաստրային ծածկագրով 0,08096 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 100,50 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 9,60 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 19,40 քառակուսի մետր մակերեսով

ամառային խոհանոցը և 6,7 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպները ճանաչել օրինական:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Էդգար Էդիկի ՈՒստյանի սեփականության իրավունքը:

4. Էդգար Էդիկի ՈՒստյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 273251,09 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2026 թ. № 1228

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ԹԻՎ 872 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով՝ հաշվի առնելով որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ 872 որոշման մեջ օրինականացման վճարի չափը քիչ է գրվել՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 24-ի «06-006-0271-0138 կադաստրային ծածկագրով 0,0410 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու, անշարժ գույքի հատակագիծը հաստատելու մասին» թիվ 872 որոշման 4-րդ կետի 1-ին մասում գրված «427170,22» թիվը փոխարինել «561293,26» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2026թ. № 1229

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-087-0122-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,02328 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՔՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1 -ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0122-0006 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,02328 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին ինքնակամ կառուցված անասնաշենքի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026MGMCLZ և Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06162M3GFF4M)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0122-0006 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,02328 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 165,70 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:

2. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0122-0006 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,02328 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինությունների հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Շիրակամուտ, Հայկական փողոց, 1-ին փակուղի 3 անասնաշենք» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու հասմար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Մարտին Խորենի Հովակիմյանին (ծնված՝ 05.04.1963թ.) օրինականացված կառույցն և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» հոկտեմբերի 2026 թվականի N 1230

ԱՐՄԱՆ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՊՐԵՍՅԱՆԻՆ «ՍՊԻՏԱԿ ՏՐԱՆՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 84-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետով, հիմք ընդունելով «ՍՊԻՏԱԿ ՏՐԱՆՍ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 6 որոշումը և Արման Վարուժանի Ապրեսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2026 թվականի հոկտեմբերի 23-ից մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից Արման Վարուժանի Ապրեսյանին նշանակել «ՍՊԻՏԱԿ ՏՐԱՆՍ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 220 000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքի և հանգստի ժամանակը և աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«22» հոկտեմբերի 2026թ. № 1231Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 25-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար Սպիտակ համայնքի տարածքում առանձնացնել անվճար վահանակներ՝ համաձայն հավելվածի:

2. Առանձնացված վահանակների վրա յուրաքանչյուր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար յուրաքանչյուր տեղում հատկացվում է 21սմ լայնությամբ, 29.7սմ բարձրությամբ տարածք հորիզոնական դասավորվածությամբ ընդհանուր 0.06237 քմ մակերեսով՝ համաձայն կից գծագրի:

3. Սույն որոշման օրինակը ենթակա է ներկայացման՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Սպիտակ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 22-ի 1231 որոշման

ՑԱՆԿ

Սպիտակ համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակների

Հ/հ	Առանձնացված տեղերի գտնվելու վայրը	Տեղերի նկարագրությունը	Տրամադրված մակերեսը	Ծանոթություն
1	ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 1	Սպիտակի մշակույթի տան արևելյան ճակատ	5քմ	
2	Ջրաշեն բնակավայր	1-ին փողոց	5քմ	
3	Արևաշող բնակավայր	1-ին փողոց	5քմ	
4	Շիրակամուտ բնակավայր	Կրասնոդարյան փողոց	5քմ	
5	Մեծ Պարնի բնակավայր	Մշակույթի տուն	5քմ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

գծագիր

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱՑՂ 29.7 սմ 21 սմ